

Ինեսա Գ. Դանիելյան

## ՄՈՄԻԿԻ ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ

Ռուսաստանի պետական գրադարանի թիվ 439.23.5 ֆոնդի ձեռագիր Ավետարանում\*

**Բանալի բառեր** – Մոմիկ, Ռուսաստանի պետական գրադարան, հայկական մանրանկարչություն, ավետարանիչների դիմանկարներ, նկարագարող Ավետարան, Գլաձորի, մանրանկարչական դպրոց, Օրբելյան:

Մոմիկը հայ միջնադարի գեղարվեստական մեծ ժառանգություն թողած արվեստագետներից է: Շատ մասնագետներ տասնամյակներ շարունակ ուսումնասիրել են նրա մանրանկարչական, քանդակագործական և ճարտարապետական ստեղծագործությունները: Ստորագրված աշխատանքներից բացի՝ Մոմիկի արվեստի ոճական, պատկերագրական առանձնահատկությունների հիման վրա ուսումնասիրողները նրան են վերագրել նաև այլ երկեր<sup>1</sup>:

Մասնավորապես Գլաձորի մանրանկարչական դպրոցին նվիրված իր մենագրության մեջ Ա. Ավետիսյանը, ուսումնասիրելով Մոմիկի ձեռագրերը, նրա վրձինն է վերագրել կիլիկյան հայոց թագուհի Կեռանի պատվերով ստեղծված 1283 թ. Ավետարանի նկարագարդումները<sup>2</sup>:

Իսկ ահա ճարտարապետական ստեղծագործություններից միայն Արենիի Սբ. Աստվածածին եկեղեցու (1321 թ.) արձանագրության մեջ է պահպանվել Մոմիկ վարդապետի անունը: Մոմիկին համարում են նաև Նորավանքի Սբ. Աստվածածին Բուրթելաշեն, Տաթևի վանքի Սբ. Գրիգոր և Եղեգիսի Զորաց եկեղեցիների ճարտարապետը: Քանդակագործական աշխատանքներից նրան են վերագրում Նորավանքի Սբ. Ստեփանոս Նախավկա եկեղեցու գավիթի բարավորի բարձրաքանդակները, Սպիտակավոր Սուրբ Աստվածածին եկեղեցու քանդակները, Նորավանքի խաչքարերից մեկը<sup>3</sup>:

\*Հոդվածն ընդունվել է տպագրության 20.8.2016:

1 Մենք նպատակ չունենք քննելու տարբեր ուսումնասիրողների կողմից Մոմիկին վերագրված բոլոր երկերը, այլ գիտական շրջանառության մեջ ենք դնում Մոսկվայում Ռուսաստանի պետական գրադարանի ֆ. 439.23.5 Ավետարանը, որի նկարագարդումները ոճով և պատկերագրությամբ նման են Մոմիկի մանրանկարներիին:

2 Տե՛ս **Ավետիսյան Ա.**, Հայկական մանրանկարչության Գլաձորի դպրոցը, Եր., 1971, էջ 49-80:

3 Տե՛ս **Մնացականյան Ս.**, 14-րդ դարի հայ քանդակագործ, ճարտարապետ և նկարիչ Մոմիկը», «Պատմա-բանասիրական հանդես», 1968 թ., N 3, էջ 219-228; **Մնացականյան Ս.**, Վարպետաց վարպետներ. Մանուել, Տրդատ, Մոմիկ, Եր., 1982, էջ 166-169; **Բարխուդարյան Ս.**, Միջնադարյան հայ

Սույն հոդվածում ներկայացնելու ենք Մոսկվայում, Ռուսաստանի պետական գրադարանի Վ. Դեննիցկու հավաքածուի ֆ. 439.23.5 գույքահամարի ներքո պահվող Ավետարանը: Այս ձեռագիրը ուսումնասիրելու ժամանակ մեր ուշադրությունը գրավեց մատյանի հետ պահվող հայկական միջնադարյան ձեռագրերի մեծավաստակ ուսումնասիրող Տատյանա Իզմայլովայի կարծիքը: Տ. Իզմայլովան Ռուսաստանի պետական գրադարանում պահվող այս Ավետարանի վերաբերյալ 1963 թ. շարադրված անտիպ նկարագրության մեջ նշում է, որ մատյանն իր գեղարվեստական ձևավորման սկզբունքով հարում է կիլիկյան նկարագարդման ավանդույթներին<sup>4</sup>: Բացի դրանից՝ նա հավանական է համարում, որ խնդրո առարկա հատորը ստեղծվել է 14-րդ դարի սկզբին Գլաձորում՝ Մոմիկ վարպետի գեղարվեստական շրջանակում: Հետազոտողը նշում է մատյանում առկա ավետարանիչների դիմանկարների ընդհանրությունը Մոմիկի աշխատանքը համարվող 1283 թ. Կեռան թագուհու Ավետարանի դիմանկարների հետ<sup>5</sup>:

Դժբախտաբար Տ. Իզմայլովան Մոսկվայի ձեռագրի նկարագարդումները չի համեմատել Մոմիկի ծաղկած մյուս մատյանների պատկերների հետ: Մինչդեռ մեր կարծիքով, նման համեմատությունը հնարավորություն կտար ավելի ամբողջական պատկերացում կազմել Մոսկվայի Ավետարանի մանրանկարների վերաբերյալ: Ավելին, պետք է նկատել, որ Մոսկվայի ձեռագրի մանրանկարները և՛ ոճով, և՛ պատկերագրությամբ շատ ավելի հարազատ են Մոմիկ ծաղկողի 1302 թ. ձեռագրին, քան թե Կեռան թագուհու պատվիրած երկրորդ Ավետարանի մանրանկարներին:

Ռուսաստանի պետական գրադարանում պահվող ձեռագիրը նկարագարդ Ավետարան է՝ 16.5x11.6 չափերով, և բաղկացած է 266 մագաղաթյա թերթերից: Կազմը կաշեպատ ստվարաթուղթ է, գիրը՝ երկայուն, սև թանաքով: Ձեռագրի նախնական հիշատակարանը չի պահպանվել, միայն Մատթեոսի ավետարանի վերջում (87ա) կա հետագա ստացողի վերաբերյալ հիշատակություն. «Զվերջին ստացող փրկական սուրբ Աւետարանիս՝ զհեզահոգի զեպլիսկոպոյսն Անտոն յիշել աղաչեմ զդասս պաշտօնէից Քրիստոսի. այի ՌՂԲ. (1643) թիին գնեցա»: Հովհաննեսի ավետարանի բնագրի վերջին էջերը պակասավոր են, և հավանաբար ձեռագրի վերջում է գետեղված եղել նաև հիմնական հիշատակարանը, որտեղ, որպես կանոն, նշվում է մատյանի ընդօրինակման ժամանակը և հանգամանքները, տեղեկություն է տրվում պատվիրատուի և կատարողների մասին:

Ճարտարապետներ և քարգործ վարպետներ, Եր., 1963; **Հասրաթյան Մ.**, Հայ ճարտարապետության և քանդակագործության նորահայտ հուշարձաններ Նորավանքում, «Լրաբեր հաս. գիտ», 1984 թ., N 8, էջ 57-68; **Պետրոսյան Հ.**, Մոմիկի խաչքարերը, «Մոմիկ 750: Զեկուցումների ժողովածու՝ նվիրված Մոմիկի ծննդյան 750 ամյակին», Եր., 2011, էջ 22-28, և այլն:

4 Վ. Դեննիցկու գրքերի անձնական հավաքածուն Մոսկվայի՝ Լենինի անվան պետական գրադարանին է վաճառվել նրա ազգականների կողմից 1963 թ., և նույն թվականին հավաքածուի մաս կազմող ձեռագիրը առաջին անգամ նկարագրել է Տ. Իզմայլովան:

5 Ինչպես վերը նշեցինք, Կեռան թագուհու 1283 թ. Ավետարանը Մոմիկի վրձինն է վերագրել Ա. Ավետիսյանը: Թերևս Տ. Իզմայլովան հիմք է ընդունել նրա տեսակետը: Ավելի ուշ Ս. Տեր-Ներսեսյանը կարծիք է հայտնել, որ թեև ավետարանիչների դիմանկարները ոճով մերձ են Մոմիկի 1302 թ. ձեռագրի մանրանկարներին, սակայն տարբերվում են 1292 թ. Ավետարանի դիմանկարներից: Ըստ գիտնականի՝ Կեռան թագուհու Ավետարանի դիմանկարները կատարվել են ձեռագրի Հայաստան տեղափոխվելուց հետո՝ Մոմիկի ոճին շատ մոտ մի նկարչի կողմից. տե՛ս **Der-Nersessian S.** L'Évangile du Matenadaran N 10525 de l'an 1306 contribution a l'étude de la miniature en Siwnik՝ au XIV siècle, "Revue des etudes Arméniennes", Tome XVI, 1982, p. 337:



Նկ. 1: Խորան  
(ՌՊԳ, ֆ. 439.23.5)

Ավետարանի նկարազարդումը բաղկացած է 10 խորաններից, Ավետարանիչների դիմանկարներից, անվանաթերթերից, լուսանցապատկերներից: Բարդ կերպարներով և զարդանախշերով հագեցած կիլիկյան խորանների համեմատությամբ՝ ավետարանների խորանները ավելի պարզ են և ունեն գեղարվեստական համեստ հարդարանք: Խորանները ուղղանկյուն են, ճակատազարդը՝ լցված բուսական զարդաձևերով, մի քանիսի սյունների խոյակները հարդարված են առյուծի գլուխներով: Խորանները լուսանցքում ուղեկցվում են ծառի, թռչնի՝ երբեմն ծառին նստած, պատկերներով (նկ. 1): Գերիշխող գույներն են կարմիրը, կապույտը, կանաչն ու ոսկին, որի փայլը որոշ հատվածներում խամրել է: Մոմիկի անունը պահպանած ձեռագրերում խորան-

ների չկան, ուստի Մոսկվայի Ավետարանի խորանները համեմատելու նույնաբնույթ նյութ չունենք<sup>6</sup>:

Մեր քննության առարկա ձեռագրի չորս Ավետարանների անվանաթերթերը պահպանվել են, և յուրաքանչյուր ավետարանչի դիմանկարին հաջորդում է համապատասխան բնագրի անվանաթերթը: Ուաձև ճակատազարդը ներքուստ ունի ձևավոր բացվածք, ողջ դաշտը լցված է բուսական զարդանախշով: Աջ կողմում լուսանցազարդն է, որի վերնամասը անվանաթերթերից երկուսում ավարտվում է խաչով: Այս էջերում հետաքրքիր լուծում ունեն գլխագրերը, որտեղ ավետարանիչներին խորհրդանշող կենդանիները միահյուսված են տառի մեջ:

Հայկական մանրանկարչության մեջ ավետարանչի խորհրդանշանով գլխատառերը ի հայտ են գալիս 11-րդ դարից<sup>7</sup>: Խորհրդանշական արարածների պատկերներով գլխագրերը սկզբնական շրջանում ձևավորվում էին կենդանիների գլուխներով, ինչպես 11-րդ դարի Մուղնու և 1053 թ. Ավետարաններում է (Մաշտոցյան Մատենադարան, NN 7736, 3793), իսկ հետագայում կենդանագիրը ցուցադրում է համապատասխան տառի արտաքին տեսքն ընդունած ամբողջական արարածին<sup>8</sup>: Նմանատիպ գլխագրերում թեև փոփոխվում է կենդանու բնական դիրքը, ու մարմնի առանձին հատվածներ ձեռք են բերում որոշ ձգվածություն, սակայն տառի վերածված կենդանու տեսակը միանգամայն ճանաչելի է մնում՝ պահպա-

6 1292 թ. Ավետարանում խորանները ամենայն հավանականությամբ չեն պահպանվել, քանի որ ձեռագիրը սկսվում է Մատթեոսի ավետարանի անվանաթերթով, և ավետարանչի դիմանկարը, որն ըստ կարգի պետք է որ նախորդեր անվանաթերթին, նույնպես բացակայում է: 1302 թ. Ստեփանոս Օրբելյանի մատյանը իր կառուցվածքով Նոր կտակարանի ընթերցվածների գիրք է և խորանների չունի: 7 Տե՛ս **Der-Nersessian S.** Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia from the Twelfth to the Fourteenth Century. *Dumbarton Oaks Studies* 31. Washington, D.C., 1993, vol I, p. 8:

8 Տե՛ս **Mathews Th., Sanjian A.** Armenian Gospel Iconography. *The Tradition of the Glajor Gospel*, Washington D. C., 1991, p. 180:

ներով նրան բնորոշ արտաքին հատկանիշները<sup>9</sup>:

Գլխատառերը ավետարանիչներին խորհրդանշող արարածներով ձևավորելու սկզբունքը Մոմիկ վարպետը կիրառել է 1292 թ. (Մատենադարան N 2848) Ավետարանում՝ «նկարագրելով» Ավետարանի առաջին երեք տառերը<sup>10</sup>: Մոսկվայի ձեռագրի Մատթեոսի Ավետարանի գլխատառը ձևավորված է ավետարանչի խորհրդանշան հրեշտակի պատկերով, որի թևը կազմում է Գ տառի կորավուն մասը, իսկ գիրքը բռնած ձեռքով ստեղծվում է տառի աջ ելուստը (նկ. 2): Նման գլխագրերը բավականին տարածված էին կիլիկյան գրքարվեստում և Գլաձորի մանրանկարչական դպրոցում<sup>11</sup>: Մոսկվայի Ավետարանի զարդագրերի համեմատությունը Մոմիկի վրձնած ձեռագրերի ձևավորումների հետ թույլ է տալիս նկատել ուշագրավ մանրամասներ: Այսպես, օրինակ՝ ռուսաստանյան ձեռագրում Մատթեոսի անվանաթերթի հրեշտակի դեմքը որոշակի ընդհանրություն ունի Մոմիկի 1302 թ. ձեռագրի կերպարների հետ (տես Ադյուսակ I, N 5):

Մարկոսի ավետարանի գլխատառը ձևավորված է լուսապսակներով օժտված առյուծի և մարդու պատկերներով, որոնք միահյուսված են «Ս» տառի մեջ, ընդ որում՝ գիրքը պահել է Մարկոսի խորհրդանիշ առյուծը, ինչը, հավանաբար, նշանակում է, որ այստեղ նրա շարադրանքն է ներկայացված (նկ. 3): Առյուծի դիմաց մարդկային կերպարի ձեռքերը ազատ առաջ են պարզված, ու թվում է, թե նա քիչ առաջ Սուրբ գիրքը հանձնել է իրեն հաջորդող ավետարանչին: Ջույգ ավետարանիչների խորհրդանշանների միավորումով կազմված սկզբնատառերը հատուկ են կիլիկյան արքունական գրքարվեստին, որտեղ գլխագրում միավորվում են համաբարբառ ավետարանների հեղինակների խորհրդանշանները<sup>12</sup>:

Ղուկասի Ավետարանի առաջին զարդագիրը ցույն է, որի բերանը թռչուն է մտնում (նկ. 4): Նմանատիպ գլխատառեր հաճախ են հանդիպում հայկական 13-14-րդ դարերի ձեռագրերում<sup>13</sup>: Հովհաննեսի Ավետարանը

9 Տես **Дурново Л.** Очерки изобразительного искусства средневековой Армении, Москва, 1979, с. 228; 10 Տես **Մաթևոսյան Կ., Զարարյան Լ.**, Մոմիկ մանրանկարիչ (13-14-րդ դդ.), Եր., 2010, էջ 23-29; **Սանուկյան Ս.**, Անվանաթերթերը Մոմիկի ծաղկած ձեռագրերում, «Մոմիկ 750. Հոբելյանական գիտաժողով»՝ նվիրված Մոմիկի ծննդյան 750-ամյակին: Զեկուցումների ժողովածու», Եր., 2011, էջ 52-53:

11 13-14-րդ դարերի մի շարք ձեռագրերում կիլիկյան այդպիսի օրինակներ են հանդիպում Թորոս Ռոսլինի Զեյթունի Ավետարանում, 1260 թ. ձեռագրում (Երուսաղեմի հայկական պատրիարքարան, N 251), Մատենադարանի N 9422 Ավետարանում (13-րդ դար), ինչպես նաև Գլաձորի մանրանկարչական դպրոցի ձեռագրերում՝ 1300 թ. (Նոր Զուղա, Սբ. Ամենափրկիչ վանք, N 477), Լոս Անջելեսի Կալիֆոռնիայի համալսարանի (U.C.L.A.) Գլաձորի Ավետարանում, Թորոս Տարոնացու նկարագրած 1307 թ. (Վենետիկ, Սուրբ Ղազար, N 1917) Ավետարաններում և այլն:

12 Այդպիսի գլխագիր ունեն Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի N 9422 (էջ 101 ա), «Ութ մանրանկարիչների» Ավետարանը (Մատենադարան, N 7651), Սմբատ Գունդստաբլի (Մատենադարան, N 7648) Ավետարանները, տես **Казарян В., Манукян С.**, Матенадаран. Том 1, Армянская рукописная книга VI-XIV веков, Москва, 1991, с. 163, илл. 307, 327; **Манукян С.**, Киликийские заглавные листы в свете бифункциональности армянского евангелия, «Հայ արվեստի հարցեր. գիտական հոդվածների ժողովածու», N 3, Եր., 2010, с. 216-217.

13 Այդօրինակ նմուշներ կան Կիլիկյան գրքարվեստում, ինչպես 13-րդ դարի Սմբատ Գունդստաբլի Ավետարանում (Մաշտոցյան Մատենադարան, N 7644), 1274 թ. ձեռագրում (Նյու Յորք, Փիերֆոնթ Սորգանի գրադարան, N 740), Մաշտոցյան Մատենադարանի N 9422 Ավետարանում և այլն: Նման զարդագրերը բավականին շատ են Հայաստանում ստեղծված մատյաններում, ինչպես Սիմեոն Արժիշեցու 1288 թ. (Մաշտոցյան Մատենադարան N 4851) և 1297 թ. (Մաշտոցյան Մատենադարան, N 4867) Ավետարաններում, Ավագ Ծաղկողի ձեռագրերում՝ 1314 թ. (Մաշտոցյան Մատենադարան, N 6230), 1329 թ. (Մատենադարան N 7650), տես Հայկական մանրանկարչություն, Զարդատառեր //

սկսվում է թռչնագրով, որտեղ «Ի» տառը ձևավորված է երկու թռչունների պատկերներով: Դրանցից մեկը վերևից կտուցով միացած է սիրամարգին, որն էլ իր հերթին պահում է գիրքը (նկ. 5): Աստվոր է այստեղ Հովհաննեսի խորհրդանիշ արծվի փոխարեն որպես տառի կառուցվածքի հիմնական տարր տեսնել սիրամարգի պատկերը: Սիրամարգի պատկերով «Ի» տառի ձևավորումներ կատարել է Պողոս Կիլիկեցին 1280 թ. Ավետարանում (Մատենադարան, N 4096), Վայոց Ձորից Բարդողիմե մանրանկարիչը՝ 1315 թ. ձեռագրում (Մատենադարան, N 9721)<sup>14</sup>:



Նկ. 2: Մատթեոսի Ավետարանի անվանաթերթը (ՌԳԳ, ֆ. 439.23.5)



Նկ. 3: Մարկոսի Ավետարանի անվանաթերթը (ՌԳԳ, ֆ. 439.23.5)

Մոսկվայի Ավետարանը աչքի չի ընկնում լուսանցագարդերի առատությամբ: Իրենց բնույթով առանձնանում են թռչնային լուսանցապատկերները, որոնցից մեկում թութակ է ներկայացված (227 ա), և կատարված է սահուն գծանկարով՝ եզրագծված ոսկով, կարմրի և կապույտի հնչեղ ակորդով: Թեմատիկ լուսանցանկարներից է մահացած՝ աչքերը փակ Ղազարոսին պատանքով գերեզմանում ցուցադրող պատկերը (247 ա): «Ղազարոսի հարության» հնագույն օրինակները հայ արվեստում հայտնի են Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցու որմնանկարներից, իսկ մանրանկարչության մեջ այն առաջին անգամ պատկերվում է 11-րդ դարի հուշարձաններում<sup>15</sup>: Հետաքրքրական է, որ լուսանցապատկերում Ղազարոսը միայնակ է պատկերված: Ձեռագրի խորանները, ինչպես նաև անվանաթերթերն ու լուսանցապատկերները ի տարբերություն Ավետարանիչների դիմանկարների, ներկայացված են պակաս հմտությամբ և զիջում են վերջիններիս իրենց կատարման վարպետությամբ և նրբությամբ:

կազմող՝ Հ. Կարազյուզյան, պատ. խմբ.՝ Է. Կորյունյան, Եր., 1992, տախտակ 45, 55, 56 և այլն: 14 Տե՛ս Հայկական մանրանկարչություն, Ջարդատառեր..., տախտակ 42, 58: Պողոս Ակներցին այն ստեղծագործողներից է, որը նախ Կիլիկիայում է աշխատել, ապա եկել է Գլաձոր, ձեռագրեր է ստեղծել Սյունիքի գրչատներում և անգամ համագործակցել է Մոմիկի հետ. տե՛ս Գևորգյան Ա., Վայոց Ձորի և Որոտանի մանրանկարչությունը, Եր., 2004, էջ 113-125: 15 Տե՛ս Չուգասյան Լ., Գրիգոր Ծաղկող, Եր., 1986, 94-95:



Նկ. 4: Ղուկասի Ավետարանի անվանաթերթը (ՌՊԳ, ֆ. 439.23.5)



Նկ. 5: Հովհաննեսի Ավետարանի անվանաթերթը (ՌՊԳ, ֆ. 439.23.5)

Մոսկվայի ձեռագրի ավետարանիչների դիմանկարները պատկերագրությամբ և ոճով հատկապես մոտ են Մոմիկ ծաղկողի 1302 թ. Ստեփանոս Օրբելյանի պատվերով նկարազարդած մատյանի մանրանկարներին (Մատենադարան, N 6792): Դիմանկարներից առաջինը պատկերում է այթռոին նստած տարեց, ալեհեր Մատթեոս Ավետարանչին՝ ավետարանական բնագրի առաջին բառերը թղթին հանձնելիս (նկ. 6): Ուշագրավ է, որ Սուրբ գրքի հեղինակը գրակալ չունի և թուղթը պահում է ձեռքում, իսկ փոքրիկ սեղանիկը, որի վրա սովորաբար դասավորված են լինում գրչության համար անհրաժեշտ պարագաները, բացակայում է<sup>16</sup>: Առանց գրակալի, գիրքը ձեռքում են պահում նաև Մոմիկի 1292 թ. մատյանում Ղուկաս Ավետարանիչը, 1302 թ. ձեռագրում՝ Պրոխորոնը, Պետրոս և Հակոբոս առաքյալները: Ետնախտրքում երևում են երկթեք կարմիր կղմինդր հիշեցնող տանիքով սյունազարդ շենքեր՝ ուղղանկյուն և շրջանաձև լուսամուտներով: Հարկ է նշել, որ Մատթեոս Ավետարանիչն իր դիմագծերով, գլխի կառուցվածքով և երկձյուղված մորուքով որոշակիորեն նմանվում է Ստեփանոս Օրբելյանի ձեռագրի Տեառնընդառաջի տեսարանում՝ Սիմեոն ծերունուն (Աղյուսակ I, N 1):



Նկ. 6: Մատթեոս Ավետարանիչը (ՌՊԳ, ֆ. 439.23.5)

16 Վասպուրականի ձեռագրերում գրիչները ևս մատյանը ձեռքում են պահում, սակայն այն վերևից անրացված է լինում պարանով, տես **Գևորգյան Ա.**, Արիեստերը և կենցաղը հայկական մանրանկարներում, Եր., 1978, էջ 10, տախտակ XXX:



Նկ. 7: Մարկոս Ավետարանչի դիմանկարը (ՌՊԳ, ֆ. 439.23.5, 14-րդ դար)



Նկ. 8: Պետրոս առաքյալի դիմանկարը (Մոմիկ, 1302 թ., Մատենադարան, N 6792)



Նկ. 9: Ղուկաս Ավետարանիչը (ՌՊԳ, ֆ. 439.23.5, 14-րդ դար)

Հաջորդ դիմանկարը պատկերում է գլխահակ նստած, ավետարանական առաջին խոսքերը գրի առնող սևահեր Մարկոս Ավետարանչին (նկ. 7): Զարմանալիորեն նրա նստարանը չի պատկերված: Ի տարբերություն Մատթեոսի մանրանկարի՝ Մարկոսի առջև փոքրիկ գրասեղան կա, վրան՝ թանաքաման և դանակ: Այդ փոքրիկ գրասեղանն իր ձևով ձիշտ այնպիսին է, ինչպիսին տեսնում ենք Մոմիկի 1302 թ. ձեռագրի Պետրոս առաքյալին ցուցադրող մանրանկարում (նկ. 8): Մարկոսի պատկերի ետնախորքը կազմող կապույտ, վարդագույն գույներով ձարտարապետական շինությունները և կանաչ կոնաձև տանիքով աշտարակը հանդիպում են նաև 1302 թ. ձեռագրում: Մարկոս Ավետարանչի կերպարանքը՝ սև խոշոր աչքերը, թավ մորուքն ու մազերը, ուղիղ քիթը և, առհասարակ, դեմքի ընդհանուր մշակումը նույնպես նմանվում են վերոնշյալ մատյանի կերպարանքներին (Աղյուսակ I, N 2):


Ղուկասի մանրանկարը կրկնում է նախորդ երկու՝ Մատթեոսի, Մարկոսի պատկերների ընդհանուր հորինվածքը, որտեղ Ավետարանչի նստած դիրքը և ձարտարապետական կառույցները գրեթե նույնն են (նկ. 9): Ղուկաս Ավետարանչի դիմագծերը ծանոթ են Մոմիկի 1302 թ. ձեռագրից և հիշեցնում են Պրոխորոնին և Հակոբոս առաքյալին (նկ. 10, աղյուսակ I, N 3):

Ավետարանիչների ետնախորքում պատկերված ձարտարապետական կառույցները ակնարկում են քաղաքային բնապատկերի մասին, քանի որ, ավանդության համաձայն, Մատթեոսն իր Ավետարանը գրել է Երուսաղեմում, Մարկոսը՝ Ալեքսանդրիայում, Ղուկասը՝ Հռոմում: Հովհաննես Ավետարանիչն ու նրա աշակերտ Պրոխորոնը ցուցադրված են լեռնային միջավայրում, քանի որ Հովհաննես առաքյալը Պատմոս կղզուց վերադառնալուց հետո երեք օր ձգնում է լեռներում և ապա թելադրում է սրբազան Ավետարանը իր աշակերտ Պրոխորոնին, որը և գրի է առնում այն<sup>17</sup>: Մանրանկարում Հովհաննեսը հայացքն ուղղել է դեպի վեր և ներշնչանքով է լցվում երկնքից երևացող Աստծո ներկայությունից, իսկ օրհնող

17 Sŕen **Buchtal H. A.** Byzantine Miniature of the Fourth Evangelists and Its Relatives., *Dumbarton Oaks Papers*, Vol. 15 (1965), p. 133; Թանգարան հայկական հին և նոր դարույթնագ: Անկանոն գիրք: Առաքելականք, Վենետիկ, 1904. Էջ 190-292:

աջը պարզել է նստած Պրոխորոնին (նկ. 11): Վերջինս մորուսով է, մի մանրամասնություն, որը հաճախ է հանդիպում հայ ձեռագրարվեստում՝ սկսած 13-րդ դարի վերջից<sup>18</sup>: Կրկին ուշադրություն է գրավում այն, որ Պրոխորոնի այժմը բացակայում է, և նա կարծես հենված է մանրանկարի ստորին մասը վերին լեռնային հատվածից զատող մեանդրով զարդարուն եզրագոտովրա: Ներշնչվող և թելադրող Հովհաննես Ավետարանիչը երկու մատները հպել է այտին: Այդօրինակ ժեստը հանդիպում է 14-րդ դարի Վայոց Ձորի գրքարվեստի մի քանի հուշարձաններում և դիտարկելի է նախ 1302 թ. Մոմիկի Ստեփանոս Օրբելյանի ձեռագրում, բացի դրանից՝ Տիրատուր Կիլիկեցու գրչագրած մատյանում (Մատենադարան, N 3393)<sup>19</sup>, մանրանկարիչ Սարգսի 1306 թ. Եղեգիսի Ավետարանում (Մատենադարան N 10525)<sup>20</sup>, Կիրակոս Թավրիզեցու ծաղկած 1330 թ. ձեռագրում (Նոր Զուղա, N 47 (43))<sup>21</sup>: Հարկ է ընդգծել, որ վերոնշյալ 14-րդ դարի ձեռագրերի մանրանկարչական արվեստում հատկապես պատկերագրության առումով նկատելի է Մոմիկի ստեղծագործության ազդեցությունը: Կարող ենք եզրակացնել, որ նրանք օգտվել են մեկ ընդհանուր նախօրինակից կամ գուցե այդ ձեռագրերի պատկերագրողման համար որպես հիմնական աղբյուր ծառայել է Մոմիկի ձեռագիրը, քանի որ նշվածներից այն ամենից վաղ թվագրությունն ունի: Հովհաննես Աստվածաբանի սև հոնքերն ու դեպի վեր սևեռված աչքերը ընդգծվում և էլ ավելի տպավորիչ են դառնում ձերմակ մագերի ու երկձյուղ մորուքի շնորհիվ: Այդպիսին է նաև Ստեփանոս Օրբելյանի ձեռագրի Հովհաննես առաքյալը (նկ.12, աղյուսակ I, N 4):

Խնդրո առարկա ավետարանիչների դիմանկարների՝ մեր բազմիցս նշած պատկերագրական և ոճական ընդհանրությունները Մոմիկի անունը պահպանած 1302 թ. Ստեփանոս Օրբելյանի պատվիրած մատյանի ձևա-



Նկ. 10: Հակոբոս առաքյալը (Մոմիկ, 1302 թ., Մատենադարան, N 6792)



Նկ. 11: Հովհաննես Ավետարանիչն ու Պրոխորոնը (ՌՊԳ, ֆ. 439.23.5, 14-րդ դար)

18 Տե՛ս **Գանիեյան Ի.**, Ավետարանիչների դիմանկարները Մոմիկի նկարագրողած 1292 թ. Ավետարանում, «Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական իններորդ նստաշրջանի նյութեր», Եր., 2015, 172-174:

19 Տե՛ս **Mathews Th., Sanjian A.** Armenian Gospel Iconography..., fig. 460h.

20 Տե՛ս **Der-Nersessian S.** L'Évangile du Matenadaran N° 10.525 de l'an 1306 Contribution a l'étude de la miniatureen Sinnik' au XIV<sup>e</sup> siècle, "Revue des Études Arméniennes", Tome XVI, 1982, pl. LXIX, fig. 11.

21 Տե՛ս **Der-Nersessian S.** Mekhitarian A., Miniatures Arméniennes d'Ispahan, Brussels, 1986, p. 117, fig. 62.





Նկ. 12: Հովհաննես Ավետարանիչն ու Պրոխորոնը (Մոմիկ, 1302 թ., Մատենադարան, N 6792)

վորումների հետ արժանի են հատուկ ուշադրության (տե՛ս աղյուսակ I և II): Հարկ է նկատի ունենալ, որ Մոմիկի 1292 թ. (Մատենադարան, N 2848) Ավետարանի նկարները պատկերագրությամբ և կատարման ձևով որոշակի տարբերվում են Ստեփանոս Օրբելյանի հատորի և հետևաբար նաև Մոսկվայի ձեռագրի մանրանկարներից: Նշանավոր վարպետի անունը կրող երկու ձեռագրերի միջև տասը տարվա տարբերություն կա և այդ ընթացքում նկարչի անհատական աշխատանքանակը զգալի զարգացում է ապրել՝ գիծը ավելի հստակ է դարձել, գույներն առավել հնչեղ են, դեմքի և մարմնի մասերի պատկերումը բավականին իրական և համաչափ: 1292 թ. մատյանում ավետարանիչների դիմանկարները քանդակային նկարագիր ունեն, մինչդեռ հաջորդ՝

1302 թ. ձեռագրում, ինչպես նաև Մոսկվայի Ավետարանում կերպարներն ավելի նուրբ և գեղանկարչական են, դիմագծերը՝ արտահայտիչ, հատկապես տպավորում են պոչիկավոր անկյուններով աչքերը ու բարակ եզրերով և միջնամասում լայնացող կամար հոնքերը, քթարմատի կարմիր բիծը, որոնք կերպարին խորթափանց և ազդեցիկ հայացք են հաղորդում: Մոմիկի առաջին Ավետարանի կերպարները օժտված չեն վերոնշյալ հատկանիշներով, ավետարանիչների դիմանկարները ավելի կոպիտ մշակում ունեն. նրանց մարմինը քանդակային տպավորություն է թողնում, ճարտարապետական խորքը ավելի պարզ շինություններից է բաղկացած, մանրանկարները շրջանակ չունեն և այլն:

**Այսպիսով, ելնելով Ռուսաստանի պետական գրադարանի Ֆ. 439.23.5 Ավետարանի և Մոմիկ ծաղկողի 1302 թ. Ստեփանոս Օրբելյանի պատվիրած ձեռագրի պատկերագրական ու ոճական սերտ ընդհանրությունից՝ մենք կարծում ենք, որ Մոսկվայում պահվող մատյանի ծաղկողը Մոմիկն է:** Ավետարանի ձևավորումը, հատկապես անվանաթերթերի հարդարանքը և գլխատառերը ցույց են տալիս ձեռագրի սերտ կապը կիլիկյան ավանդույթների հետ, մի երևույթ, որը բնորոշ էր Գլաձորի մանրանկարչությանը և Մոմիկի գրքարվեստին նույնպես:

Երբ է ստեղծվել Մոսկվայի ձեռագիրը: Տ. Իզմայլովան առաջարկում է այդ ձեռագրի ստեղծման ժամանակը համարել 14-րդ դարի սկիզբը և, ինչպես նշեցինք, մատյանի մանրանկարները համեմատում է 1283 թ. Ավետարանի պատկերների հետ: Համաձայնելով նրա տեսակետի հետ՝ մենք համարում ենք, որ Մոմիկն է այս ձեռագրի նկարողը, և նկատի ունենք Մոսկվայի ձեռագրի վերոնշյալ «ազգակցությունը» 1302 թ. Նոր կտակարանի հետ:

Մոսկվայի ձեռագրի ստեղծման ժամանակը պարզելու համար հարկ է ուշադրություն դարձնել վարպետի կենսագրության հետևյալ փաստերին: Հայտնի է, որ Մոմիկը, 1302 թ. նկարագարդելով Ստեփանոս Օրբելյանի ձեռագիրը, 1304 թ. պատրաստել է նրա հիշատակի խաչքարը: 1307 թ.

վարպետը Սյունիքի հաջորդ մետրոպոլիտ Հովհաննես Օրբելի պատվերով սկսում է մի այլ ձեռագրի գրչությունը (Հարթֆորդի «Քեյս Մեմորիալ» գրադարան, N 3), որը, սակայն, անավարտ է թողնում՝ տեսողության վատանալու պատճառով<sup>22</sup>: 1308 թ. Մոմիկը Սյունյաց Թամթա իշխանուհու պատվերով խաչքար է կերտում<sup>23</sup>: Այսպիսով, ստացվում է, որ Մոմիկը, ըստ մեզ հասած ստորագիր ստեղծագործությունների ժամանակագրության, 14-րդ դարի առաջին տասնամյակում ստեղծագործական դարար է ունեցել 1303, 1305–1306, 1309–1310 թթ.<sup>24</sup>: Չպետք է մոռանալ, որ հայտնի է ևս մեկ խաչքար՝ կրկին Թամթա իշխանուհու պատվերով քանդակված, որը հստակ թվագրություն և վարպետի անվամբ ստորագրություն չունի, սակայն ըստ ուսումնասիրությունների՝ պատրաստված է նրա կողմից 1312 թ. առաջ<sup>25</sup>: Մոմիկի անունը հիշատակվում է նաև 1321 թ. Արենիի Սբ. Աստվածածին եկեղեցու կառուցման արձանագրության մեջ և 1331 թ. Հարթֆորդի «Քեյս մեմորիալ» գրադարանի վերոնշյալ ձեռագրում, իր իսկ գրած հիշատակարանում:

**Ելնելով վերոհիշյալից՝ կարող ենք եզրակացնել, որ Ռուսաստանի պետական գրադարանում պահվող Ավետարանը Մոմիկը կարող էր նկարագարողել 14-րդ դարի առաջին տասնամյակի «ազատ» տարիներին՝ 1302-ից հետո: Այս եզրակացության օգտին է խոսում նաև այն հանգամանքը, որ Մոսկվայի Ավետարանի մանրանկարներում կերպարները ավելի մշակված, սահուն և վստահ գծանկարով են արված, քան 1302 թ. ձեռագրում: Նաև հարկ է նկատի առնել, որ վարպետը մշակել է կերպարների որոշակի տիպեր, որոնք դրսևորվում են և՛ Ստեփանոս Օրբելյանի ձեռագրում, և՛ Մոսկվայի Ավետարանում (Աղյուսակ I):**

Հարց է առաջանում՝ ո՞վ է Մոսկվայի Ավետարանի պատվիրատուն: Թվում է, թե փաստեր չկան պարզելու այս խնդիրը: Մեր կարծիքով՝ անհայտ պատվիրատուի անձը պարզելու համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հետևյալ իրողությանը: Չի կարելի չնկատել, որ Ռուսաստանի պետական գրադարանի ձեռագրի մանրանկարները աչքի են ընկնում լուսապսակների հարդարանքում և մանրանկարների ետնախորքում օգտագործված ոսկու կիրառմամբ: Ոսկու առկայությունը ձեռագրում հուշում է պատվիրատուի նյութական մեծ կարողությունների և բարձր դիրքի մասին: Բացի դրանից՝ ձեռագիրը գրված է որակյալ մագաղաթի վրա, ինչը նույնպես մեկենասի ունևորության մասին է վկայում: Մոմիկի գրած և նկարագարողած 1292 թ. Ավետարանում, որի պատվիրատուները Յովանես և Թադեոս քահանա եղբայրներն են, ոսկի գրեթե չի օգտագործվել, իսկ ձեռագիրն էլ գրված է թղթի վրա<sup>26</sup>: Նույնը չենք կարող ասել Ստեփանոս

22 Տե՛ս **Der Nersessian S.** An Illustrated Armenian Gospel of the XIVth century and Check List of Armenian Manuscripts in the Case Memorial Library, "The Hartford Seminary Foundation Bulletin", N 19 (1955), p. 1-7; **Քյուրոյան Հ.**, ԺԳ դարու մանրանկարիչ Մոմիկի մասին, «Պատմա-բանասիրական Խանդես», N 2, 1969 թ., էջ 203–204:

23 Տե՛ս **Մաթևոսյան Կ.**, Մոմիկ, Եր., 2010, էջ 34:








24 Ամենևին չի բացառվում, որ մի օր գիտական շրջանառության մեջ կղրվեն նոր ստեղծագործություններ և կփոխեն մեր պատկերացումները Մոմիկի արվեստի ժամանակագրության վերաբերյալ:

25 Տե՛ս **Պետրոսյան Հ.** Մոմիկի խաչքարերը, «Մոմիկ 750: Ջեկուցումների ժողովածու»՝ նվիրված Մոմիկի ծննդյան 750 ամակին», Եր., 2011, էջ 23, 26:

26 Տե՛ս ցուցակ ձեռագրացց Մաշտոցի անվան Մատենադարանի, հատ. Ա, կազմ. **Օ. Եզանյան, Ա.**





Օրբելյանի մատյանի վերաբերյալ, որը գրվել է մագաղաթի վրա և աչքի է ընկնում ոսկու առատ օգտագործմամբ<sup>27</sup>: Այսպիսով, եթե նկատի ունենանք, որ Մոմիկը հիմնականում աշխատել է Օրբելյան իշխանական տան անդամների պատվերով, ապա ամենևին չի բացառվում, որ այս ձեռագիրը նույնպես այդ տոհմի որևէ ազդեցիկ ներկայացուցչի պատվերն է:

**Ռուսաստանի պետական գրադարանի ֆ. 439.23.5 Ավետարանի և Մոմիկի 1302 թ. Նոր կտակարանի (Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, N 6792) մանրանկարների կերպարների դեմքերի համեմատական աղյուսակ 1**

N	Ռուսաստանի պետական գրադարանի ֆ. 439.23.5 Ավետարանը	Մոմիկի 1302 թ. ձեռագիրը (Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, N 6792)
1.	<p>Մատթեոս Ավետարանիչը</p> 	<p>Սիմեոն ծերունին</p> 
2.	<p>Մարկոս Ավետարանիչը</p> 	<p>Առաքյալ</p> 
3.	<p>Ղուկաս Ավետարանիչը</p> 	<p>Պրոխորոն                      Հակոբոս առաքյալ</p>  


















**Զայթունյան, Փ. Անթարյան, Եր., 1965, էջ 887:**

27 Ստեփանոս Օրբելյանի պատվիրած ձեռագիրը 15-րդ դարի սկզբին խիստ վնասված վիճակում հասել է Գրիգոր Խլաթեցուն, որն էլ նորոգել է այն և պակասավոր էջերը փոխարինել 144 թղթաթերթերով, տե՛ս **Մաթևոսյան Կ., Մոմիկ..., էջ 28:**

4.	<p>Հովհաննես Ավետարանիչը</p> 	<p>Հովհաննես Ավետարանիչը</p> 
5.	<p>Հրեշտակ</p> 	<p>Առաքյալ Գաբրիել հրեշտակապետը</p> 

**Առանձին մանրամասների համեմատական աղյուսակ II**

N	Ռուսաստանի պետական գրադարանի ֆ. 439.23.5 Ավետարան	Մոմիկի 1302 թ. Նոր կտակարան (Մերոպ Մաշտոցի անվան Մատենադարան, N 6792)
1.		

	 	  
2.	 	 
3.	  	  
4.		

5.		
6.	   	    

**Ինեսա Գ. Դանիելյան** – գիտական հետաքրքրությունների բնագավառը՝ հայկական, բյուզանդական և արևմտաեվրոպական միջնադարյան արվեստ: Ուսումնասիրում է հայ միջնադարյան նշանավոր սանրանկարիչ Մոմիկի գեղարվեստական ժառանգությունը: Հրատարակած հոդվածները նվիրված են վարպետի ստեղծագործությունների պատկերագրական և խորհրդաբանական առանձնահատկություններին:

## Summary

### MINIATURE BY MOMIK

In the manuscript Gospel of the Russian State Library (f. 439.23.5)

Inesa G. Danielyan

**Key words** – Momik, Armenian miniature, Illuminated Gospel, Russian State Library, Portraits of the Evangelists, Miniature of Gladzor, Orbelian.

The article is devoted to study of the miniatures of Armenian Four Gospels from Russian State Library (f. 439.23.5). The illustration of the manuscript consists of khorans, portraits of the Evangelists, title pages and marginalia. It is unknown when, where and by whom was created the manuscript, because the last pages where usually are given the main information about the manuscript – lost. Article discusses the question of the author of paintings of the Russian State Library's manuscript. In 1963, Tatiana Izmailova, a prominent scholar, in unpublished description of that manuscript, which is also stored in Russian State Library, it is noted that the artistic decoration of the Four Gospels is close to Gladzor school of Armenian miniature and to the paintings of master Momik. T. Izmailova dated the manuscript to the beginning of the 14th century. Based on stylistic and iconographic study of the miniatures we can confirm that the artist of the Gospel was the famous Armenian medieval master – miniaturist, sculptor and architect Momik. The compositions of miniatures representing the Evangelists, as well as their images and types indicate the relationship between the paintings of Momik's manuscript of 1302 (Matenadaran, N 6792) and therefore, the Gospel can be dated to the first decade of the 14th century. If we take into account some additional details, we can make assumptions about the identity of the patron of the manuscript. The abundant use of gold in the illustrations, as well as the parchment, on which the manuscript was written, indicates the material well-being of the donor. It is not excluded that the patron of the manuscript was one of the most important member of the noble family Orbelian as master Momik mostly worked under their patronage. The article is devoted to study of the miniatures of Armenian Four Gospels from Russian State Library (f. 439.23.5). The illustration of the manuscript consists of khorans, portraits of the Evangelists, title pages and marginalia. It is unknown when, where and by whom was created the manuscript, because the last pages where usually are given the main information about the manuscript – lost. Article discusses the question of the author of paintings of the Russian State Library's manuscript. In 1963, Tatiana Izmailova, a prominent scholar, in unpublished description of that manuscript, which is also stored in Russian State Library, noted that the artistic decoration of the Four Gospels is close to Gladzor school of Armenian miniature and to the paintings of master Momik. T. Izmailova dated the manuscript to the beginning of the 14th century. Based on stylistic and iconographic study of the miniatures we can confirm that the artist of the Gospel was famous Armenian medieval master – miniaturist,

sculptor and architect Momik. The compositions of miniatures representing the Evangelists, as well as their images and types indicate the relationship between the paintings of Momik's manuscript of 1302 (Matenadaran, N 6792) and therefore, the Gospel can be dated to the first decade of the 14th century. If we take into account some additional details, we can make assumptions about the identity of the patron of the manuscript. The abundant use of gold in the illustrations, as well as the parchment, on which the manuscript was written, indicate the material well-being of the donor. It is not excluded that the patron of the manuscript was one of the most important member of the noble family Orbelian as master Momik mostly worked under their patronage.

ԱՐԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՄԱՍԻՆ

Резюме

### МИНИАТЮРЫ МОМИКА

В рукописной Евангелии Российской государственной библиотеки (ф. 439.23.5)

Инесса Г. Даниелян

**Ключевые слова** – Момик, Российская государственная библиотека, армянская миниатюра, портреты евангелистов, иллюстрированное Евангелие, миниатюра гладзорской школы, Орбелян.

Статья посвящена изучению миниатюр армянского Четвероевангелия Российской государственной библиотеки (ф. 439.23.5). Иллюстрации рукописи составляют хораны, портреты евангелистов, заглавные листы и маргиналии. Неизвестно – когда, где и кем создавалась рукопись, так как памятная запись, где обычно даются эти сведения – потеряна. В статье рассматривается вопрос авторства иллюстраций этой рукописи. В РГБ вместе с манускриптом хранится неопубликованное описание, данное в 1963 г. выдающимся ученым, знатоком армянского средневекового искусства Т. А. Измайловой, где автор отмечает, что художественное убранство Евангелия восходит к Гладзорской школе и близко к художественному кругу мастера Момика. Т. А. Измайлова датирует рукопись началом XIV столетия. На основе стилистического и иконографического изучения миниатюр – можем подтвердить, что художник Евангелия знаменитый армянский средневековый мастер – миниатюрист, скульптор и архитектор Момик. Композиции миниатюр представляющих евангелистов, а также их образы и типы указывают на родство с миниатюрами Момика в рукописи 1302 г. (Матенадаран, № 6792).

Учитывая некоторые детали, можно сделать предположения о личности заказчика манускрипта. Так, о материальном благополучии заказчика свидетельствует обильное использование золота в иллюстрациях, а также пергамент, на котором написана рукопись. Не исключено, что заказчиком манускрипта был один из влиятельных представителей княжеского рода Орбелянов, так как мастер Момик в основном работал под их покровительством.

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳԻՒՄՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ, 2016  
Ը (ԺՂ) ԳՐԱԳՐ. ԹԻՎ 3 (55). ԽԱՄԻՆ-ԱԽԱՐԱԿԱԳՐԻՐ, 2016

ՀՀ-ի հանրահայտության հանրապետության